ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-2018/ՀՀ-509-1 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում 22.06.2018թ կնքված պայմանագրում 20.12.2018թ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի ժամկետի երկարացում:

Փոփոխության նկարագրություն: Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ279+727-կմ282+727 հատվածի հիմնանորոգման աշխատանքների, Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ291+940-կմ294+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների, Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման 352-րդ կիլոմետրում վթարային կամուրջի շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքների, Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 353-րդ կիլոմետրում սողանքային հատվածի վերականգնման աշխատանքների,Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ376+200-կմ376+280 հատվածի կողնակի և շեպի նստվածքի վերականգնման աշխատանքների, Հ-13, Վաղարշապատ-Մասիս-Մ-2 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ16+000-կմ18+000 2կմ երկարությամբ հատվածի ասֆալտապատման աշխատանքների, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա համայնքում վթարված հենապատի վերականգնման աշխատանքների, Ա/ճ Տ-1-31, Մ-1-Շամիրամ հիմնանորոգման աշխատանքների, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այրիվանք եկեղեցի տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների,Ա/ճ Տ-1-23, Հ-21-Բերքառատ հիմնանորոգման աշխատանքների և Ա/ճ Տ-5-25, Մ3-Լեռնապատ հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ

Համաձայնագրի գինը կազմում է 779280 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: 22.06.2018թ *կնքված թիվ* ՏԿՆ-2018/ՀՀ-509-1 *պայմանագրի 7.5 կետ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անի Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010 59-00-38

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
22.06.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-2018/ՀՀ-509-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«20» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ.Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 22.06.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-2018/ՀՀ-509-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

Կասեցնել պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ. մայիսի 31-ը:

Սահմանել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր:

Լրացնել պայմանագրում 4.1 կետը հետևյալ խմբագրմամբ <<Պայմանագրի գնից՝ մինչև 779280 (յոթ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011020832 ՀՎՀՀ 02565518	<<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>>ՓԲԸ Հ/Հ 22000115083200[illegible] ՀՎՀՀ 0[illegible]7251
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ